Արձանագրություն N 2

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «30» մարտի 2016թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Կարեն Համբարձումյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Արթուր Թամրազյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Խորեն Պետրոսյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Արման Հարությունյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/Միմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-01» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտի բացման մասին.

Հայտը բացվել է www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2016թ.-ի մարտի 30-ին, ժամը 10:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 44-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գինը /ՀՀ դրամ/
1	<<Ֆեմիդա>> ձայնագրառման համակարգ	9 600 000
2	<<Ֆեմիդա>> ձայնագրառման համակարգ	*

*Գնումը 2-րդ չափաբաժնի մասով իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա:

3. Հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Մասնակցի անվանումը (անունը)	Հասցեն, հեռախոսահամարը
«ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ	ք. Երևան, Սունդուկյան 12ա, հեռ. (010)581111

4. Համակարգում 18.03.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

5. Տվյալներ՝ բացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերով պահանջվող փաստաթղթերը. Համակարգում որևէ փաստաթուղթ /այդ թվում՝ գնային առաջարկները/ կցված չեն երևում /հնարավոր չէ դիտել ֆայլերը/: Ղեկավարվելով Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Տեղեկատվություն՝ ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգին 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ներկայացված միակ հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին, հանձնաժողովը որոշեց ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Հանձնաժողովը որոշեց՝

- հաստատել «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է).

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Կարեն Համբարձումյան

Անդամներ՝ Արթուր Թամրազյան

Խորեն Պետրոսյան

Կարեն Մելքոնյան

Արման Հարությունյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ <<ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-01>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2016 թվականի մարտի 30-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-01

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք.Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին համառոտ տեղեկատվությունը:

Չափաբաժին	**Գնման առարկայի համառոտ նկարագրություն**	**Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում**	**Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն'"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/	**Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն**
1	<<Ֆեմիդա>> ձայնագրառման համակարգ	«ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ	1-ին կետի 2-րդ կետի 3-րդ կետի 4-րդ կետի	հայտը չի համապատասխանում հրավերի պայմաններին
2	<<Ֆեմիդա>> ձայնագրառման համակարգ	«ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ	1-ին կետի 2-րդ կետի 3-րդ կետի 4-րդ կետի	հայտը չի համապատասխանում հրավերի պայմաններին

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա. Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլ. փոստ՝ datgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ **«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ**